

“ԵՀԳԳ արևելյան
երկրներում օդի որակի
կառավարում” *AIR-Q-GOV*
“Լավագույն հասանելի
տեխնոլոգիաներից բխող
արտանետումների քանակների և
ընտրված բնագավառների համար
արտանետումների սահմանային
չափաքանակների մշակում»
պիլոտային ծրագիր

Ավարտական զեկույց

2014թ. Փետրվարի 17



This project is funded
by the European Union



And implemented
by a consortium led by MWH

Լավագույն հասանելի տեխնոլոգիաներից բխող արտանետումների քանակների և ընտրված բնագավառների համար արտանետումների սահմանային չափաքանակների մշակում

Ամփոփ տեղեկություններ

ԾՐԱԳՐԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ՝

ԵՀԳԳ արևելյան երկրներում օդի որակի կառավարում

«Լավագույն հասանելի տեխնոլոգիաներից բխող արտանետումների քանակների և ընտրված բնագավառների համար արտանետումների սահմանային չափաքանակների մշակում» պիլոտային ծրագիր

ԱՄՓՈՓԻՉ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՊՅՅՄԱՆԱԳԻՐ՝ 2010/232-231

ԵՐԿԻՐ՝ Հայաստան

ԿԱՏԱՐՈՂ

ԱՆՎԱՆՈՒՄԸ՝ «ՔՈՆՍԵԿՈԱՐԴ» ՍՊԸ

ՀԱՍՑԵ՝ ՀՀ, Երևան, Գրիբոյեդովի 1ա/12

ՀԵՌԱԽՈՍ՝ + 374 10 24 96 98, +374 91 586635

ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ԱՆՁ՝ Վռամ Թևոսյան

ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ՝ 2014թ. Փետրվարի 17

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ՀԵՂԻՆԱԿ՝ Վռամ Թևոսյան

ԱՌԱՋԱՏԱՐ ՓՈՐՁԱԳԵՏ՝ Այգա Կալա

Ընտրված բնագավառներում և կայանքներում արտանետումների սահմանային արժեքների և ԼՀՏ համապատասխան արտանետում մակարդակների վերաբերյալ առաջարկությունների մշակում

Բովանդակություն

Ներածություն	4
1 Հայաստանում արտանետումների նորմավորման և թույլտվությունների տրման առկա վիճակը.....	5
1.1 Հիմնական սկզբունքները	5
1.2 Թույլտվությունները	6
2 ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅՈՒՆԸ	7
3 Մթնոլորտային օդն աղտոտող հիմնական աղբյուրները	8
3.1 Արտադրական ձեռնարկությունների մթնոլորտային օդի վրա ազդեցության գնահատում.....	8
3.2 Ձեռնարկությունների ցանկը, որոնք ամենամեծ ազդեցությունն են թողնում մթնոլորտային օդի վրա	9
3.3 ԼՀՏ համաձայն, արտանետման մակարդակների մշակման համար, արդյունաբերական բնագավառի 3 ոլորտների ընտրություն	12
4 ԼՀՏ համաձայն, առաջարկվող արտանետումների մակարդակները, արդյունաբերության 3 ընտրված ոլորտների համար մոնիթորինգի և կառավարման կարգը.....	12
5 Անցումային ժամանակաշրջանի առաջարկվող սխեման.....	16
5.1 Վառելիքի այրման խոշոր կայանքներ.....	16
5.2 Ցեմենտի արդյունաբերություն.....	17
5.3 Գունավոր մետալուրգիա	17
5.4 Առաջարկվող անցումային ժամանակացույցը.....	18

Լավագույն հասանելի տեխնոլոգիաներից բխող արտանետումների քանակների և ընտրված բնագավառների համար արտանետումների սահմանային չափաքանակների մշակում

Հապավումների ցանկ

ԼՀՏ- լավագույն հասանելի տեխնոլոգիա

ԵՄ- Եվրոպական միություն

ԱՀԿՎ-աղտոտման համալիր կանխարգելում և վերահսկում

ԱԱ- արդյունաբերական արտանետումներ

ՀՀ- Հայաստանի Հանրապետություն

ԵՀԳԳ- Եվրոպական հարևանության և գործընկերության գործիք

ԽՍՀՄ- Խորհրդային սոցիալիստական հանրապետությունների միություն

ՍԹԿ- սահմանային թույլատրելի կոնցենտրացիա

ՕՊՕ-օդի պահանջվող օգտագործում

ՋԷԿ- ջերմաէլեկտրակայան

ՓԲԸ- փակ բաժնետիրական ընկերություն

ԿՊՄ – կախված պինդ մասնիկներ

ՇԳԿ-շոգեգազային կայանք

Ներածություն

“ԵՀԳԳ արևելյան երկրներում օդի որակի կառավարում” ծրագիրը, որը մշակվել է 2011թ.-ի հունվարին, և ունի 48 ամիս ժամկետ, օգնում է շահառու երկրներին, բարելավել առկա համակարգային և իրավական դաշտը, ինչպես նաև ապահովում է դրանց ու եվրոպական չափանիշների համապատասխանեցումը և բազմակողմանի բնապահպանական համաձայնագրերով և կոնվենցիաներով սահմանված երկրի պարտավորությունների իրականացումը:

Ծրագրի լրացուցիչ նպատակն է ընդլայնել հիմնական շահագրգիռ կողմերի միջև համագործակցությունը և հասարակությանը ավելի տեղեկացված և իրազեկ դարձնել օդի որակի մասին: Ծրագրին մասնակցում են Հայաստանը, Ադրբեջանը, Բելառուսը, Վրաստանը, Մոլդովան, Ռուսաստանի Դաշնությունը և Ուկրաինան:

Ծրագիրն իրականացվում է կոնսորցիումով MWH-ի գլխավորությամբ՝ CENN, FORCE Technology Rusland, GOPA, MAMA-86 և NERI-AU-ի հետ միասին:

Տարածաշրջանային նախագծի շրջանակներում, օդի որակի կառավարման ոլորտում ներգրավված երկրների գերակայություններն են՝

- մթնոլորտային օդի պահպանության ազգային օրենսդրության և ԵՄ չափանիշների համապատասխանեցում;
- “Մեծ հեռավորությունների վրա օդի անդրսահմանային աղտոտման մասին” կոնվենցիայի արձանագրությունների վավերացման վերաբերյալ ազգային պոտենցիալի

Լավագույն հասանելի տեխնոլոգիաներից բխող արտանետումների քանակների և ընտրված բնագավառների համար արտանետումների սահմանային չափաքանակների մշակում

գնահատում (ծանր մետաղների, կայուն աղտոտիչների, Գյոթեբորգի) և դրանց պարտավորությունների կատարում;

- տրանսպորտի ոլորտում աղտոտման նվազեցման խթանում: Մասնավորապես՝ հասարակական տրանսպորտի և էկոլոգիապես մաքուր տրանսպորտային միջոցների օգտագործումը խթանող մեխանիզմների մշակում;
- օդի որակի մոնիթորինգի ցանցի բարելավում;
- որոշակի բնագավառներում և կայանքներում արտանետումների տեխնոլոգիապես հիմնավորված սահմանային արժեքների մշակում;
- լավագույն հասանելի տեխնոլոգիաների ներդրման խթանիչ մեխանիզմների մշակում:

Ներգրավված երկրների գերակայությունները պարզելու համար, անց են կացվել խորհրդակցություններ այդ երկրների բնապահպանական մարմինների և մասնագետների հետ: Հայաստանում, որպես հիմնական խնդիրներ դիտարկվել են արդյունաբերության և տրանսպորտի ոլորտներում արտանետումների նորմավորման հարցերը: Արդյունքում, 2012թվականի դեկտեմբերին, սկսվեց «լավագույն հասանելի տեխնոլոգիաներից բխող արտանետման չափաքանակների մշակում» ազգային պիլոտային ծրագրի իրականացումը, որի նպատակն է նորմատիվաիրավական բազայի կատարելագործումը, Հայաստանում արդյունաբերական արտանետումների կառավարման համար:

Ծրագիրն ուղղված է մթնոլորտային արտանետումների սահմանային արժեքների ներդրմանը, ոլորտի լավագույն հասանելի տեխնոլոգիաների հիման վրա, համաձայն «արդյունաբերական արտանետումների» 2010/75/EU Դիրեկտիվի:

Նախագծի իրականացումը պետք է ապահովի արտանետումների մակարդակների գործնական արժեքների մշակում և ստեղծի պայմաններ մթնոլորտային օդի աղտոտման կառավարման համակարգում ԼՀՏ սկզբունքների ինտեգրման համար, դրանով իսկ պատճառաբանելով ավելի մաքուր տեխնոլոգիաների ներդրումը և շրջակա միջավայրի ավելի լավ որակի ապահովումը: Նախագծի իրականացման ժամկետը 12 ամիս է:

1 Հայաստանում արտանետումների նորմավորման և թույլտվությունների տրման առկա վիճակը

1.1 Հիմնական սկզբունքները

Վնասակար նյութերի արտանետումների նորմավորումը Հայաստանում իրականացվում է սանիտարահիգիենիկ սկզբունքի հիման վրա: Հիմնական չափանիշ է հանդիսանում հասարակական վայրերի (քաղաքների, ավանների, գյուղերի) օդում տվյալ նյութի պարունակության սանիտարական նորմերի պահպանումը:

Արտանետումների միաժամանակ առավելագույն քանակը (խողովակի եզրին) սահմանվում է այն պայմանով, որ ցրվելուց հետո, տվյալ նյութի գետնամերձ կոնցենտրացիան, հաշվի առնելով անբարենպաստ եղանակային պայմանները և ֆոնային աղտոտվածությունը, չգերազանցի սահմանային թույլատրելի առավելագույն միանվագ կոնցենտրացիան:

Հավագույն հասանելի տեխնոլոգիաներից բխող արտանետումների քանակների և ընտրված բնագավառների համար արտանետումների սահմանային չափաքանակների մշակում

Այդ կարգն ընդունվել էր դեռ ԽՍՀՄ-ի ժամանակ, որի նպատակն էր բնակչության առողջության պահպանությունը:

Սակայն, այդ սկզբունքի կիրառման փորձը ցույց է տվել իր անարդյունավետ լինելը: Այդ մոտեցման հիմնական թերություններն են՝

- համակարգը չի հիմնվում արդյունաբերական գործընթացի իրական հնարավորությունների և հզորությունների վրա,
- համակարգը չի խթանում նոր, առավել առաջադեմ տեխնոլոգիաների ներդրմանը և առավել արդյունավետ փոշու և գազի որսման սարքավորումների օգտագործմանը,
- համակարգը չի պարտադրում արտադրողներին ներդնել նոր բնապահպանական միջոցառումներ , բարելավել բնապահպանական կառավարման և մոնիթորինգի համակարգը,
- օդի որակի նորմատիվների բացակայությունը (ՄԹԿ) ոչ բնակեցված տարածքներում ստեղծում է իրավական անորոշություն, բնակավայրերից հեռու գտնվող ձեռնարկությունների համար արտանետումների նորմավորման ժամանակ:

1.2 Թույլտվությունները

Ձեռնարկությունները ստանում են առանձին թույլտվություններ բնական տարբեր ոլորտների վրա ազդեցությունների համար, այն է՝ ջրօգտագործման և կեղտաջրերի արտահոսքի, մթնոլորտային օդ արտանետումների, վնասակար թափոնների տեղադրման համար առանձին առանձին: Բոլորն էլ տրվում են ՀՀ բնապահպանության նախարարության կողմից:

Թույլտվությունները տրվում են ջրօգտագործման, սահմանային թույլատրելի արտահոսքերի (ԹՄԱ), սահմանային թույլատրելի արտանետումների (ՄԹԱ) և թափոնների ձևավորման նորմատիվային նախագծերի հիման վրա:

Թույլտվությունների տրման կարգը, ձևը և դրանց պարունակությունը սահմանված են համապատասխան օրենսդրական և ենթաօրենսդրական ակտերում:

2011թվականին, կատարվել են փոփոխություններ «Մթնոլորտային օդի պահպանության մասին» ՀՀ օրենքում: Այլ փոփոխությունների հետ մեկտեղ, հաստատվել է ձեռնարկության աղտոտման պոտենցիալի նվազագույն սահմանը, որից ելնելով որոշվում է մթնոլորտ աղտոտող նյութերի արտանետման նորմի սահմանման կամ տրման եղանակը: Համաձայն այդ փոփոխության, ՄԹԱ նախագծի հիման վրա արտանետման թույլտվություն են ստանում միայն այն ձեռնարկությունները, որոնց ՕՊՕ-ն գերազանցում է 2մլրդ.մ³: Այն ձեռնարկությունների համար, որոնց ՕՊՕ-ն կազմում է 200մլն-ից մինչև 2մլրդ մ³, արտանետման նորմը սահմանվում է փաստացի արտանետումների հիման վրա: Ձեռնարկությունները, որոնց ՕՊՕ-ն 200մլն-ից պակաս է, պետական հաշվառման ենթակա չեն: Սահմանային թույլատրելի արտանետումների (ՄԹԱ) և արտահոսքերի (ԹՄԱ) նորմատիվային նախագծերը, որոնք հաշվարկվում են, ելնելով սահմանային թույլատրելի կոնցենտրացիաների (ՄԹԿ) չափաքանակների պահպանման պահանջից, մշակվում են ձեռնարկությունների կողմից: Ձեռնարկությունները ներկայացնում են

Հավագույն հասանելի տեխնոլոգիաներից բխող արտանետումների քանակների և ընտրված բնագավառների համար արտանետումների սահմանային չափաքանակների մշակում

ՄԹԿ նախագիծ, նկարագրելով տեխնոլոգիաները, արտանետման աղբյուրների չափաքանակները, արտանետվող նյութերի անվանումները, դրանց փաստացի և ռեզլամենտային քանակները: Այդ տվյալների հիման վրա, նախարարությունը կատարում է ցրման հաշվարկ, համեմատում է յուրաքանչյուր նյութի արդյունքները հաստատված ՄԹԿ-ների հետ և եթե արդյունքները չեն գերազանցում ՄԹԿ-ն, տրվում է արտանետման թույլտվություն:

Արտանետումների թույլտվության տրման պահից, արտանետումների քանակները, որոնք ներկայացված են ՄԹԱ նախագծում, դառնում են համապատասխան ձեռնարկության (սարքավորման) նորմատիվներ: Համաձայն՝ «Մթնոլորտային օդի պահպանության մասին» ՀՀ օրենքի 13 հոդվածի՝ թույլատրվում են միայն այն արտանետումները, որոնց համար մշակված են համապատասխան սանիտարական ցուցանիշներ /ՄԹԿ/:

Նոր կառուցվող, ընդլայնվող և վերակառուցվող օբյեկտներին արտանետումների թույլտվություն տրվում է պետական բնապահպանական փորձաքննության դրական եզրակացության հիման վրա, 1 տարի ժամկետով, սկսած շահագործման օրվանից: Այդ ժամկետից հետո, արտանետումների նորմավորումն իրականացվում է համաձայն մթնոլորտային օդի պահպանության օրենքի:

2 ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅՈՒՆԸ

Մինչև 1920-ական թվականները, Հայաստանի հիմնական արտադրանքն ապահովում էր գյուղատնտեսությունը: Արդյունաբերությամբ զբաղվում էին միայն մի քանի փոքր ձեռնարկություններ: 1920-ական թվականներին, Հայաստանում արդյունաբերության զարգացման համար մի շարք լայնամասշտաբ ծրագրեր իրականացվեցին: Դրվեց քիմիական և մետալուրգիական ոլորտների հիմքը, որոնց հետ զուգահեռ զարգանում էր նաև էլեկտրաէներգիայի արդյունաբերությունը: Ստեղծվեցին մի շարք ձեռնարկություններ, որոնք սկսեցին արտադրել կալցիումի կարբիդ, կաուստիկ սոդա, քլոր, աղային, ծծմբային, ազոտային թթուներ, քլորոպրենային կաուչուկներ և լատեքսներ, ազոտային պարարտանյութեր, ապակի, քիմիական մանրաթելեր և պլաստիկ նյութեր:

ԽՍՀՄ-ի փլուզումից հետո մեքենաշինական և էլեկտրատեխնիկական ոլորտները գրեթե դադարեցին գործել, քիմիական արդյունաբերությունը գործում է փոքր ձեռնարկությունների հաշվին: Միակ մեծ ձեռնարկությունը դա “Նաիրիտ” գործարանն է, որը գործում է իր հնարավորությունների 5-10 տոկոսի չափով:

1991-1994 թվականների տնտեսական բարեփոխումներն ընթանում էին կտրուկ տնտեսական անկման պայմաններում: 1994 թվականից հաջողվեց կանգնեցնել երկրի տնտեսական անկումը և ապահովել որոշակի կայունություն: Նկատվեց արդյունաբերության որոշակի աշխուժացում, շնորհիվ արտասահմանյան ներդրումների, որոնք էլ հանգեցրեցին արտասահմանյան շուկաներից և ներդրումներից զգալի կախվածության:

Արդյունաբերության զարգացման գործընթացը, որի հիմքը դրվել էր 1994թ.-ին, նկատելի արդյունքներ տվեց 1996թ.-ին: Դրան նպաստեցին մի շարք օրենսդրական և նորմատիվային

Հավագույն հասանելի տեխնոլոգիաներից բխող արտանետումների քանակների և ընտրված բնագավառների համար արտանետումների սահմանային չափաքանակների մշակում

փաստաթղթերի ընդունումը, ֆինանսական ներդրումների ծավալների աճը և արտահանման ավելացումը: Գործընթացները առավել արդյունավետ էին արդյունահանող արդյունաբերության (մասնավորապես շինանյութերի և հանքարդյունաբերության) և թանկարժեք քարերի մշակման ոլորտներում, որտեղ ավելի արդյունավետ են հանրապետությունում առկա տեխնոլոգիական պոտենցիալի և բնական ռեսուրսների նպատակային օգտագործման հնարավորությունները: Հատուկ ուշադրություն դարձվեց ներքին ռեսուրսների՝ վերամշակման հետ կապված մրցակցային արտադրությունների զարգացմանը: Որոշակի առաջընթաց նկատվեց նաև փոքր և միջին ձեռնարկությունների գործունեության մեջ, որոնք գործում էին տեղական հումքի և ռեսուրսների հիման վրա:

90-ականների երկրորդ կեսը որոշակի չափով բնութագրվում է, որպես արտադրական հնարավորությունների մասնակի վերականգնման և շահագործման ժամանակաշրջան: Մեփական սակավ էներգետիկ հումքի բազայի, աշխատուժի մեծ “ավելցուկի” և արդյունաբերության զարգացման երկարաժամկետ ու ընդգրկուն ծրագրերի բացակայության պայմաններում, արդյունաբերությունն ուներ նեղ ուղղվածություն, որը առավելապես թելադրվում էր միջազգային կազմակերպությունների կողմից իրականացվող ծրագրերի տրամաբանությամբ, որոնցում բնապահպանական լուծումները ավելի շատ դեկլարատիվ բնույթ էին կրում:

Տնտեսության նման զարգացումը հանգեցրեց որոշակի արդյունաբերության միակողմանիության: Հանքարդյունաբերության, և որպես հետևանք մետաղագործական ոլորտների զարգացումը, պայմանավորված էր համապատասխան հումքային ռեսուրսների առկայությամբ:

3 Մթնոլորտային օդն աղտոտող հիմնական աղբյուրները

Արդյունաբերական ոլորտի արտանետումների վիճակագրական հաշվետվությունների ուսումնասիրումը ցույց է տվել, որ հիմնական աղտոտիչները ջերմաէներգետիկայի, մետալուրգիայի և ցեմենտի արդյունաբերության օբյեկտներն են:

3.1 Արտադրական ձեռնարկությունների մթնոլորտային օդի վրա ազդեցության գնահատում

Ձեռնարկություններն ըստ մթնոլորտային օդի վրա ազդեցության աստիճանի դասակարգելու համար Հայաստանում ընդունված է “օդի պահանջվող օգտագործման” (ՕՊՕ) ցուցանիշը:

1999թ.-ից ՕՊՕ-ի հիման վրա է որոշվում շրջակա միջավայրի վրա վնասակար նյութերի ազդեցության պետական հաշվառման անհրաժեշտությունը (“Մթնոլորտային օդի վրա վնասակար նյութերի ազդեցության պետական հաշվառման կարգը հաստատելու մասին” ՀՀ կառավարության 22.04.1999թ. N 259որոշում):

Համաձայն այդ կարգի, պետական հաշվառման ենթակա են այն աղբյուրները, որոնց ՕՊՕ-ն՝ գերազանցում է 200 մլն.մ³/տարի:

Հավազույն հասանելի տեխնոլոգիաներից բխող արտանետումների քանակների և ընտրված բնագավառների համար արտանետումների սահմանային չափաքանակների մշակում

ՕՊՕ –ն մաքուր օդի այն ծավալն է, որն անհրաժեշտ է բնակելի տարածքներում մթնոլորտ արտանետված վնասակար նյութերի կոնցենտրացիան նոսրացնելու մինչև օրական միջին թույլատրելի կոնցենտրացիա:

ՕՊՕ-ի հաշվարկը կատարվում է հետևյալ բանաձևով՝

$$n \quad A_i$$

$$\text{ՕՊՕ}_i = \sum \frac{A_i}{U_{\text{ԹԿ}i}} > 200 \text{ մլն.մ}^3/\text{տարի},$$

Որտեղ A_i -ն – i - նյութի տարեկան առավելագույն արտանետումն է, մգ/տարի

$U_{\text{ԹԿ}i}$ -ն – նյութի օրական միջին թույլատրելի կոնցենտրացիան է, մգ /մ³:

ՕՊՕ-ն համարվում է պարզունակ մոդել, սակայն միևնույն ժամանակ այն ունիվերսալ եղանակ է, որը հնարավորություն է տալիս գնահատել տարբեր բաղադրիչների ազդեցությունները՝ որակական և քանակական առումով:

3.2 Ձեռնարկությունների ցանկը, որոնք ամենամեծ ազդեցությունն են թողնում մթնոլորտային օդի վրա

Ձեռնարկությունների վիճակագրական հաշվետվության տվյալների հիման վրա, կատարվել է ՕՊՕ-ի հաշվարկ և ընտրվել են 7 ձեռնարկություններ, որոնք ունեն առավել մեծ ՕՊՕ: Այս և ձեռնարկություններին հաջորդող ձեռնարկություններն ունեն զգալիորեն ավելի քիչ ՕՊՕ:

Աղյուսակ 1. Ընտրված ձեռնարկությունների արտանետումները և ՕՊՕ ցուցանիշը

Արտանետվող նյութի անվանումը	Արտանետումների քանակը, տ/տարի	ՄԹԿ միջին օրական, մգ/մ ³	ՕՊՕ, մլրդ.մ ³ /տարի
Այլվերդու պղնձաձուլական գործարան			
Ծծմբի երկօքսիդ	28166.6	0.05	563332
Անօրգանական փոշի	115.3	0.15	769
Կապար	6.1	0.0003	20333
Ցինկ	9	0.05	180
Մկնդեղ	6.1	0.003	2033
Պղինձ	11.9	0.002	5950
Ընդհանուր	-	-	592597
<< Արարատ- ցեմենտ >> ՓԲԸ			
Անօրգանական փոշի	370.06	0.02 ¹	18503
Ածխածնի օքսիդ	502.23	3	167
Ազոտի երկօքսիդ	139.4	0.04	3485

¹Չտարբերակված փոշու միջին օրական ՄԹԿ-ն կազմում է 0.15 մգ/մ³, ցեմենտի արտադրությունից արտանետվող միջ. փոշին կազմում է - 0.02 մգ/մ³.

Հավագույն հասանելի տեխնոլոգիաներից բխող արտանետումների քանակների և ընտրված բնագավառների համար արտանետումների սահմանային չափաքանակների մշակում

Ընդհանուր			22155
<< Միկա ցեմենտ>> ՓԲԸ			
Անօրգանական փոշի	217.6	0.02	10880
Ածխածնի օքսիդ	176.3	3	59
Ազոտի երկօքսիդ	29.1	0.04	728
Ընդհանուր			11667
Երևանի ՋԷԿ			
Ազոտի երկօքսիդ	333.5	0.04	8338
<< Արմենիան մոլիբդեն պրոդաքշն>> ՓԲԸ			
Անօրգանական փոշի	57.1	0.15	381
Ծծմբի երկօքսիդ	300.3	0.05	6006
Ածխածնի օքսիդ	49.2	3	16
Ազոտի երկօքսիդ	16.7	0.04	418
Ընդհանուր			6821
<< Մաքուր երկաթ>> ՓԲԸ			
Անօրգանական փոշի	2.76	0.15	18
Ծծմբի երկօքսիդ	320.7	0.05	6414
Ածխածնի օքսիդ	36.4	3	12
Ազոտի երկօքսիդ	4.66	0.04	117
Մոլիբդեն	3.18	0.02	159
Սմոնիակ	0.7	0.04	18
Մանգանի օքսիդներ	0.003	0.001	3
Ընդհանուր			6741
Հրագղանի ՋԷԿ			
Ազոտի երկօքսիդ	147.984	0.04	3700

Ընտրված ձեռնարկությունների ազդեցության աստիճանի գնահատման համար աղյուսակ 2-ում բերված են ինչպես ՕՊՕ-ի լրիվ արժեքները, այնպես էլ հանրապետության ընդհանուր ՕՊՕ-ի տոկոսային մասերը:

Աղյուսակ 2. ՕՊՕ համեմատական ցուցանիշները

Աղտոտման աղբյուրի անվանումը	ՕՊՕ, մլրդ.մ ³ /տարի	ՕՊՕ, %
Ալավերդու պղնձաձուլական գործարան	592597.0	90.24
<<Արարացեմենտ>> ՓԲԸ	22155.0	3.37
<<Միկա-ցեմենտ>> ՓԲԸ	11667.0	1.78
Երևան ՋԷԿ	8330.0	1.27
<< Արմենիան մոլիբդեն պրոդաքշն>> ՓԲԸ	6821.0	1.04
<<Մաքուր երկաթ>> ՓԲԸ	6741.0	1.03
Հրագղանի ՋԷԿ	3700.0	0.56
Ընդամենը 7 կազմակերպությունների համար	652011.0	99.29
Ընդհանուր երկրում	656679.1	100.0

Անկախ այն բանից, որ ՕՊՕ-ն իր մեջ չի ներառում մթնոլորտային օդի վրա ազդեցության որոշակի կարևոր գործոններ (աղբյուրների գտնվելու վայրը և պարամետրերը,

Հավագույն հասանելի տեխնոլոգիաներից բխող արտանետումների քանակների և ընտրված բնագավառների համար արտանետումների սահմանային չափաքանակների մշակում

ռեիլեֆի պայմանները, շրջակայքում շինությունների առկայություն, որոշ նյութերի մոտ ՍԹԿ-ի բացակայություն), այնուամենայնիվ առաջադրված խնդրի շրջանակներում՝ “հիմնական աղտոտիչների որոշում”, այն լիովին կիրառելի է, և տալիս է բավարար արդյունքներ: Հիմք ընդունելով վերը նշվածը, կարելի է միանշանակ պնդել, որ ընտրված ձեռնարկությունները (աղբյուրները) մթնոլորտային օդի հիմնական աղտոտողներն են:

Աղյուսակ 3-ում ներկայացված են ընտրված ձեռնարկությունները և ոլորտները, համաձայն 2010/75EU հավելված 1-ի:

Աղյուսակ 3.

N	Ոլորտի և ենթոլորտի անվանումն ըստ հավելված1-ի	Ընտրված ձեռնարկության անվանումը
1. Էներգետիկա		
1.1.	Վառելիանյութի այրում 50ՄՎտ և ավել ընդհանուր նոմինալ օգտագործվող ջերմային հզորությամբ սարքավորումներում	Երևան ՋԷԿ Հրազդան ՋԷԿ
2. Մետաղների արտադրություն և մշակում		
2.1.	Մետաղական հանքաքարերի ազլոմերացիա կամ թրծում (ներառյալ սուլֆիդային հանքաքարերը)	“Արմենիան մոլիբդեն փրոդաքշն” ՓԲԸ “Մաքուր երկաթ” ՓԲԸ
2.5.	Գունավոր մետաղների մշակում՝ ա. հանքաքարերից, կոնցենտրատներից կամ երկրորդային հումքային նյութերից գունավոր մետաղների արտադրություն՝ մետալուրգիական, քիմիական կամ էլեկտրոլիտիկ պրոցեսների միջոցով:	Ալավերդու պղնձաձուլական գործարան ՓԲԸ “Արմենիան Քոփեր Փրոգրամ”
3. Հանքային հումքի վերամշակում		
3.1.	Ցեմենտի, կապարի և մագնիումի օքսիդի արտադրություն՝ ա. ցեմենտային կլինկերի արտադրություն՝ ավելի քան 500 տ/օրական արտադրողականությամբ պտտվող այրման վառարաններում, կամ ավելի քան 50 տ/օրական արտադրողականությամբ այլ տիպի վառարաններում	“Արարատ-ցեմենտ” ՓԲԸ “Միկա-ցեմենտ” ՓԲԸ

Լավագույն հասանելի տեխնոլոգիաներից բխող արտանետումների քանակների և ընտրված բնագավառների համար արտանետումների սահմանային չափաքանակների մշակում

3.3 ԼՀՏ համաձայն, արտանետման մակարդակների մշակման համար, արդյունաբերական բնագավառի 3 ոլորտների ընտրություն

Հայաստանի արդյունաբերության և տնտեսական զարգացման գերակայությունների վերլուծության, մթնոլորտային օդի վրա առանձին տնտեսական ոլորտների ազդեցության և այդ ոլորտների ու առանձին արտադրությունների կատեգորիաների որոշման արդյունքում, ընտրվել են արդյունաբերական գործունեության 3 ոլորտներ, որոնք համապատասխանում են արդյունաբերական արտանետումների Դիրեկտիվի թիվ «1» հավելվածի դասակարգմանը:

- Արդյունաբերության ընտրված ոլորտները
- Ջերմաէներգետիկա,
 - Գունավոր մետալուրգիա,
 - Շինարարական նյութերի արտադրություն:

Ուսումնասիրված 7 ձեռնարկություններից, ընտրության չափանիշներին համապատասխանող վերջնական ցուցակ են մտել՝

- Երևանի ՋԷԿ (ջերմաէներգետիկա),
- Հրազդան ՋԷԿ-ի 5-րդ էներգաբլոկ (ջերմաէներգետիկա),
- Ալավերդու պղնձաձուլական գործարան (գունավոր մետալուրգիա),
- Արարատի ցեմենտի գործարան (շինանյութեր)
- Հրազդանի ցեմենտի գործարան (շինանյութեր):

Ներկայացված ձեռնարկությունների արտանետումները կազմում են ամբողջ հանրապետության ՕՊՕ ցուցանիշի 97,22%:

4 ԼՀՏ համաձայն, առաջարկվող արտանետումների մակարդակները, արդյունաբերության 3 ընտրված ոլորտների համար մոնիթորինգի և կառավարման կարգը

Ծրագրի առաջին փուլում կատարված աշխատանքների հիման վրա, Հայաստանի արդյունաբերության 3 ընտրված ոլորտների համար կազմվել են “Լավագույն հասանելի տեխնոլոգիաների տեղեկատու փաստաթղթեր”, կազմվել են արտանետումների չափաքանակների և անհրաժեշտ մոնիթորինգի կարգի առաջարկներ:

2010/75 Դիրեկտիվի պահանջների համար առավել նպատակահարմար է երեք արդյունաբերական գործընթացների ռեժիմների և առանձին հանգույցների համար, գազաօդային խառնուրդի արտանետումներում վնասակար նյութերի սահմանային կոնցենտրացիաների ցուցանիշների հիման վրա նորմավորման կարգը: Երեք ոլորտների համար տեխնոլոգիական համալիրներն են՝

- Ցեմենտի արտադրություն

Հավազույն հասանելի տեխնոլոգիաներից բխող արտանետումների քանակների և ընտրված բնագավառների համար արտանետումների սահմանային չափաքանակների մշակում

- Առաջնային և երկրորդային պղնձի արտադրություն
- Բնական գազի այրման խոշոր կայանքներ:

Արտադրության յուրաքանչյուր տեսակի համար, որպես իրավական գործիք առաջարկվում է տեխնիկական կանոնակարգերի մեթոդը: Արտադրական գործընթացների կարգավորումը, այդ թվում արտադրական գործընթացների, հումքի, արտադրանքի և արտադրանքի որակի ապահովման հետ կապված պահանջներն ու բնութագրերն իրականացվում են համաձայն 8.02.2012-ին ընդունված «Տեխնիկական կանոնակարգերի մասին» ՀՀ օրենքի: Տեխնիկական կանոնակարգերն հաստատվում են ՀՀ կառավարության որոշումներով:

Տեղեկատու փաստաթղթերում ներկայացված արտանետումների տիրույթների հիման վրա, կազմվել են արտանետման չափաքանակներ, երեք ընտրված արդյունաբերական ոլորտների համար, որոնք ներկայացված են ստորև՝

Աղյուսակ 4. Վառելիքի (բնական գազ) այրման խոշոր կայանքների արտանետման սահմանային արժեքները

Սարքավորման տեսակը	ԼՀՏ համապատասխան արտանետման մակարդակը, (մգ/Նմ ³)		Ծխագազերում թթվածնի մնացորդային պարունակությունը, (O ₂ %)
	NOx	CO	
Գազային տուրբիններ			
Նոր գազային տուրբիններ	20-50	5-100	15
Առկա գազային տուրբիններ	50-90	30-100	15
Գազային ստացիոնար շարժիչներ			
Նոր գազային շարժիչներ	20 – 75	30 – 100	15
Առկա գազային շարժիչներ	20 – 100	30 – 100	15
Գազային կաթսաներ			
Նոր կաթսաներ	50 – 100	30 – 100	3
Առկա կաթսաներ	50 – 100	30 – 100	3
Շոգեգազային ցիկլ			
Նոր ՇԳԿ	20-50	5-100	15
Առկա ՇԳԿ	20-90	5-100	15

Աղյուսակ 5. Առաջնային պղնձի արտադրության արտանետման սահմանային արժեքները

Արտանետման աղբյուր	Փոշու արտանետումներ	SO ₂
Հումքի ընդունում, տեղափոխում, պահեստավորում, խառնում, մանրացում, չորացում և մաղում	≤5 մգ/Նմ ³	-
Խտանյութի չորացում	≤10 մգ/Նմ ³	≤ 300 մգ/Նմ ³
Խտանյութի թրծում	-	≤ 500 մգ/Նմ ³

Հավազույն հասանելի տեխնոլոգիաներից բխող արտանետումների քանակների և ընտրված բնագավառների համար արտանետումների սահմանային չափաքանակների մշակում

Խտանյութի հալեցում	- ԿՊՄ ≤ 10 մգ/Նմ ³ - Pb ≤ 3 մգ/Նմ ³ - As ≤ 1 մգ/Նմ ³	(արտանետվող գազերում SO ₂ < 1 %)
Փոխարկիչ		
Մետաղի հալեցում	- ԿՊՄ ≤ 5 մգ/Նմ ³ - Pb ≤ 3 մգ/Նմ ³ - As ≤ 1 մգ/Նմ ³	≤ 300 մգ/Նմ ³
Կաղապարում	-	
Խարամի վերամշակում	- ԿՊՄ ≤ 5 մգ/Նմ ³ - Pb ≤ 3 մգ/Նմ ³	≤ 200 մգ/Նմ ³
Մեկ կոնտակտային/միանվագ կլանում	-	≤ 450 մգ/Նմ ³
Երկկոնտակտային/երկու անգամյա կլանում	-	≤ 770 մգ/Նմ ³

Աղյուսակ 6. Առաջնային պղնձի արտադրության արտանետումների սահմանային արժեքները

Արտանետման աղբյուր	Փոշու արտանետումներ	ՊՔԴԴ/Ֆ	Ընդհանուր ածխածին	SO ₂
Հումքի ընդունում, տեղափոխում, պահեստավորում, խառնում, մանրացում, չորացում և մադում	≤ 5 մգ/Նմ ³	-		-
Խտանյութի չորացում		-		-
Յուղազրկում	-		≤ 10 մգ/Նմ ³	
Հալեցում	- ԿՊՄ ≤ 5 մգ/Նմ ³ - Pb ≤ 3 մգ/Նմ ³ - As ≤ 1 մգ/Նմ ³			≤ 300 մգ/Նմ ³ (< 1 % SO ₂)
Փոխարկիչ		≤ 0.1 ng I-TEQ/Nm ³	-	
Մետաղի հալեցում	- ԿՊՄ ≤ 5 մգ/Նմ ³ - Pb ≤ 1 մգ/Նմ ³ - As ≤ 1 մգ/Նմ ³		≤ 10 մգ/Նմ ³	≤ 300 մգ/Նմ ³
Կաղապարում	-	-	-	
Պղնձի հալեցման վառարան	≤ 5 մգ/Նմ ³	-	-	-
Խարամի վերամշակում	- ԿՊՄ ≤ 5 մգ/Նմ ³ - Pb ≤ 3 մգ/Նմ ³	-	-	≤ 200 մգ/Նմ ³

Հավագույն հասանելի տեխնոլոգիաներից բխող արտանետումների քանակների և ընտրված բնագավառների համար արտանետումների սահմանային չափաքանակների մշակում

Աղյուսակ 7. Երկրորդային պղնձի արտադրության արտանետումների սահմանային արժեքները

Նորմավորվող նյութ	Չափման միավոր	Տեխնոլոգիական գործընթաց		
		Հումքի ընդունում, տեղափոխում, պահեստավորում, խառնում, մանրացում, չորացում և մաղում	Կլինկերի թրծում	Կլինկերի հովացում և մանրացում
Փոշի (կախված մասնիկներ)	մգ/Նմ ³	≤ 10	≤ 20	≤ 20
NO _x	մգ/Նմ ³	-	≤ 800	-
SO ₂	մգ/Նմ ³	-	≤ 250	-
C	մգ/Նմ ³	-	≤ 80	-
HCl	մգ/Նմ ³	-	≤ 10	-
HF	մգ/Նմ ³	-	≤ 1	-
ՍՄԴԼ/Փ	մգ I-TEQ/Hմ ³	-	≤ 0.1	-
Hg	մգ/Նմ ³	-	≤ 0.05	-
Σ (Cd, Tl)	մգ/Նմ ³	-	≤ 0.05	-
Σ (As, Sb, Pb, Cr, Co, Cu, Mg, Ni, V)	մգ/Նմ ³	-	≤ 0.5	-

Բոլոր նախապատրաստական աշխատանքների հիման վրա, մշակվել են հետևյալ իրավական ակտերի նախագծերը՝

- «Մթնոլորտային օդի պահպանության մասին» ՀՀ օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծ,
- «Գունավոր մետալուրգիայի արդյունաբերության ոլորտի պղնձի արտադրության շահագործման պրոցեսում առաջացող մթնոլորտային օդն աղտոտող նյութերի արտանետումների տեխնիկական նորմատիվները (չափաքանակների տիրույթները) սահմանման մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծ,
- «Շինանյութերի արդյունաբերության ոլորտի ցեմենտի արտադրության շահագործման պրոցեսում առաջացող մթնոլորտային օդն աղտոտող նյութերի արտանետումների տեխնիկական նորմատիվները (չափաքանակների տիրույթները) սահմանման մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծ,
- «Էլեկտրաէներգետիկայի արդյունաբերության ոլորտի գազի այրմամբ էներգիայի արտադրության պրոցեսում առաջացող մթնոլորտային օդն աղտոտող նյութերի արտանետումների տեխնիկական նորմատիվները (չափաքանակների տիրույթները) սահմանման մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծ,
- «Մթնոլորտային օդի վրա վնասակար ներգործությունների պետական հաշվառման կարգը հաստատելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության 1999թ. ապրիլի 22-ի

Հավագույն հասանելի տեխնոլոգիաներից բխող արտանետումների քանակների և ընտրված բնագավառների համար արտանետումների սահմանային չափաքանակների մշակում

N259 որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին” ՀՀ կառավարության որոշման նախագիծ,

- “Մթնոլորտային օդն աղտոտող նյութերի սահմանային թույլատրելի արտանետումների նորմատիվների մշակման ու հաստատման կարգը սահմանելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 30.03.1999թ N192 և 21.08.2008թ. N953 -Ն որոշումները ուժը կորցրած ճանաչելու մասին” Հայաստանի Հանրապետության կառավարության 2012թ դեկտեմբերի 27-ի N1673 -Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին” ՀՀ կառավարության որոշման նախագիծ,

- Գերատեսչական ակտի նախագիծ՝ «Շինարարական նյութերի արդյունաբերական ոլորտի ցեմենտի արտադրության լավագույն հասանելի տեխնոլոգիաների տեղեկատու փաստաթղթի եզրակացության հաստատման մասին» ՀՀ բնապահպանության նախարարի հրաման,

- Գերատեսչական ակտի նախագիծ՝ «Գունավոր մետալուրգիայի արդյունաբերական ոլորտի պղնձի արտադրության լավագույն հասանելի տեխնոլոգիաների տեղեկատու փաստաթղթի եզրակացության հաստատման մասին» ՀՀ բնապահպանության նախարարի հրաման,

- Գերատեսչական ակտի նախագիծ՝ «Էլեկտրաէներգետիկայի արդյունաբերական ոլորտի էլեկտրաէներգիայի արտադրության լավագույն հասանելի տեխնոլոգիաների տեղեկատու փաստաթղթի եզրակացության հաստատման մասին» ՀՀ բնապահպանության նախարարի հրաման:

Մշակված նախագծերը քննարկվել են ՀՀ բնապահպանության նախարարության ներկայացուցիչների և թվինինգային ծրագրի փորձագետների հետ:

5 Անցումային ժամանակաշրջանի առաջարկվող սխեման

5.1 Վառելիքի այրման խոշոր կայանքներ

Ներկայումս Հայաստանում առկա են 4 խոշոր ջերմաէլեկտրակայաններ՝

- ՀրՋԷԿ ՍՊԸ,
- «Հրազդան-5» ՓԲԸ «Արմոուսգազարդ»,
- ԵրՋԷԿ (նոր կայանք),
- ԵրՋԷԿ (հին կայանք):

Թվարկածներից ՀրՋԷԿ ՍՊԸ-ն և ԵրՋԷԿ-ը (հին կայանք), գրեթե չեն գործում և դրանց հետագա շահագործումը առկա վիճակում, անհնար է:

«Հրազդան-5» ՓԲԸ «Արմոուսգազարդ»-ը և ԵրՋԷԿ (նոր կայանք)-ը հազեցված են ժամանակակից տեխնոլոգիական սարքավորումներով և դրանց արտանետումների ցուցանիշները համապատասխանում են ԵՄ “Խոշոր վառելիք աիրող կայանքների” Դիրեկտիվին և համապատասխան BREF-ին:

Հավագույն հասանելի տեխնոլոգիաներից բխող արտանետումների քանակների և ընտրված բնագավառների համար արտանետումների սահմանային չափաքանակների մշակում

Սակայն այդ ձեռնարկություններում չկա բնապահպանական կառավարման և մոնիթորինգի ժամանակակից համակարգ: «Քոնսեկոարդ» ընկերության մասնագետների կարծիքով, եվրոպական չափանիշների պահանջած կառավարման և մոնիթորինգի համակարգի ներդրման համար պահանջվում է 3-ից 5 տարի:

5.2 Ցեմենտի արդյունաբերություն

Հայաստանի ցեմենտի արդյունաբերությունը ներկայացված է երկու խոշոր գործարաններով՝

- «Միկա-ցեմենտ» ՓԲԸ
- «Արարատցեմենտ» ՓԲԸ:

Երկու ձեռնարկություններն էլ չեն համապատասխանում 2010/75 Դիրեկտիվի և ցեմենտի արդյունաբերության BREF-ի պահանջներին, մասնավորապես վնասակար նյութերի արտանետման ցուցանիշներին, արդյունաբերության կազմակերպմանը, բնապահպանական կառավարման և մոնիթորինգի համակարգերին:

Հրագրանի «Միկա-ցեմենտ» ՓԲԸ գործարանը կառուցվել է դեռ խորհրդային ժամանակներում, բազմաթիվ հանգույցներ մաշվել են, դրանք չեն ապահովում ոչ բնապահպանական պահանջները, ոչ էլ թույլ են տալիս ամբողջ արտադրությանն աշխատել անխափան և արդյունավետ:

«Արարատցեմենտ» ՓԲԸ գործարանը կառուցվել է անցած դարի 90-ական թվականներին, սակայն այստեղ էլ կան շատ խնդիրներ, օրինակ՝ անարդյունավետ փոշեկլանիչ համակարգեր, կազմակերպված արտանետումներ և այլն:

Երկու գործարաններում էլ կարիք կա իրականացնել վերակառուցման աշխատանքներ և ներդնել արտադրության կազմակերպման ժամանակակից համակարգեր: Սակայն, անցումային սխեմայի մասին այդ ձեռնարկություններում չկան հստակ ծրագրեր և այստեղ կառաջարկվի ընդհանուր սխեման:

5.3 Գունավոր մետալուրգիա

Հայաստանում գործում է գունավոր մետալուրգիայի արտադրության միայն մեկ համեմատաբար մեծ գործարան՝ Ալավերդու պղնձաձուլական գործարանը՝ «Էյ-Մի-Փի» ՓԲԸ: Գործարանն աշխատում է գրեթե առանց գազամաքրման սարքավորումների: Տեղադրվել են մի քանի ոչ մեծ փոշեկլանման սարքավորումներ, սակայն մթնոլորտային օդի հիմնական աղտոտիչը՝ ծծմբի երկօքսիդը, առանց որևէ մաքրման արտանետվում է մթնոլորտ:

«Էյ-Մի-Փի» ՓԲԸ-ում մշակվել են արտանետման նվազեցման ծրագրեր, և ուսումնասիրվել են խնդրի լուծման մի քանի տարբերակներ: Սակայն, ձեռնարկության ղեկավարության կարծիքով, խնդիրը գործարանի հետագա շահագործման տնտեսական նպատակահարմարությունն է: Հիմնական հարցը գործարանի ցածր ծանրաբեռնությունն է: Տարեկան 7000-9000տ առաջնային պղնձի արտադրության դեպքում, արդիականացման և մաքրման սարքավորումների կառուցման բոլոր ուսումնասիրվող տարբերակներն անշահավետ

Հավագույն հասանելի տեխնոլոգիաներից բխող արտանետումների քանակների և ընտրված բնագավառների համար արտանետումների սահմանային չափաքանակների մշակում

են: Հայաստանում, պղնձի խտանյութի շուկան սահմանափակ է, Հայաստանի սահմանից դուրս խտանյութի ձեռք բերումը կապված է տրանսպորտային մեծ ծախսերի հետ և նպատակահարմար չէ:

Միակ լուծումը կարող է լինել Թեղուտի պղնձի հանքավայրի շահագործումը, որը թույլ կտա պղնձաձուլական գործարանի արտադրողականությունը հասցնել անհրաժեշտ մակարդակի: Սակայն, այստեղ կան բազմաթիվ խնդիրներ, ինչպես տեխնիկական բնույթի, այնպես էլ կապված զգալի հասարակական հակազդեցությունների հետ, քանի որ հանքավայրի մշակումը կապված է մեծ բնապահպանական ռիսկերի հետ:

Այս պայմաններից ելնելով, ձեռնարկության ղեկավարությունը չի կարող օբյեկտիվորեն գնահատել անհրաժեշտ տեխնոլոգիական լուծումների հնարավորությունը և ներդրման ժամկետները:

5.4 Առաջարկվող անցումային ժամանակացույցը

Այս պիլոտային ծրագրին զուգահեռ, Հայաստանում իրականացվում են “EU Twinning Project on Pollution Prevention. AM10/ENP-PCA/EN/06. Strengthening the Ministry of Nature Protection in Introducing Integrated Pollution Prevention and Control” նախագծի աշխատանքները:

Աշխատանքների համակարգման նպատակով, այս պիլոտային ծրագրի մասնագետները հանդիպել և իրականացրել են քննարկումներ թվինինգային ծրագրում ներգրավված մասնագետների և համակարգողի հետ: Մի շարք հարցերի հետ քննարկվել են նաև անցումային սխեմայի խնդիրները: Թվինինգային ծրագրում ուսումնասիրվում է 13 – 16 տարի ժամանակացույցի առաջարկ:

Այս զեկույցի նախորդ բաժիններում ներկայացված պայմանները հաշվի առնելով, անցումային ժամանակացույցը կարող է ընդունվել քննարկման բոլոր մասնակիցների համատեղ առաջարկի հիման վրա և ամենաառաջին ժամկետը, դա 15 տարին է:

Համատեղ քննարկումների ժամանակ, թվինինգային ծրագրի և «Քոնսեկուարդ» ընկերության ներկայացուցիչները եկան մեկ ընդհանուր հայտարարի, որ ավելի նպատակահարմար կլինի ներկայացված փաստաթղթերն ընդգրկել թվինինգային ծրագրի փաթեթում: Մինչ այդ ենթադրվում է, որ ենթաօրենսդրական ակտերի նախագծերը (5 կառավարության որոշում և 3 գերատեսչական ակտ) համապատասխանում են ծրագրի ընդհանուր սկզբունքին և կընդունվեն որպես հիմք, իսկ մթնոլորտային օդի պահպանության մասին օրենքում փոփոխությունների կամ նոր օրենքի մշակման հարցը կախված են Հայաստանի բնապահպանական քաղաքականության հիմունքների մասին օրենքի մշակվող նախագծից (շրջանակային օրենք), որը նաև կպարունակի համալիր բնապահպանական թույլտվությունների բաժին:

Համատեղ օրենսդրական փաթեթը պետք է ներկայացվի 2014թվականի նոյեմբերին: